

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի ապրիլի 25-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 311-րդ հոդվածի 2-րդ մասում «վարչապետի» բառը փոխարինել «պետական նախարարի» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասում «Սահմանադրության 1-ին հոդվածի 1-ին մասով, 2-6-րդ հոդվածներով կամ 7-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «Սահմանադրության 1-ին հոդվածի 1-ին մասով, 2-4-րդ հոդվածներով, 5-րդ հոդվածի 1-ին մասով, 6-րդ հոդվածի 1-ին մասով կամ 7-րդ հոդվածով» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 315-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «Գերագույն դատարանի սահմանադրական պալատին» բառերը փոխարինել «Գերագույն դատարանին՝ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 354-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 354. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը

1. Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելը, Մարդու իրավունքների պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների

իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու
անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելը՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից
չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ
ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման
օրվան հաջորդող օրը:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրությամբ նախանշված կառավարման նախագահական համակարգին անցնելու կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում համապատասխան փոփոխություններ կատարել և նոր կարգավորումները արտացոլել ընթացիկ օրենսդրության մեջ:
2.	Առաջարկվող կարգավորման բնույթը
	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է օրենսգրքի 311-րդ հոդվածում «վարչապետ» բառը փոխարինել «պետական նախարար» բառերով՝ պայմանավորված Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ նախանշված կառավարության նոր կազմով: Օրենսգրքի 312-րդ հոդվածում՝ սահմանադրական կարգը տապալելը վերտառությամբ, հղում է կատարվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2006 թվականի Սահմանադրության առանձին հոդվածների, ուստի նախագծով նախատեսվում է դրանք համապատասխանեցնել Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրության համապատասխան հոդվածներին: Նախագծով նոր խմբագրությամբ է շարադրվել 354-րդ հոդվածը, ինչը պայմանավորված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագծի ներկայացմամբ, որն Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդին է ներկայացվել 2017 թվականի հոկտեմբերի 1-ին:
3.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
	Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:
4.	Ակնկալվող արդյունքը
	Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում արտացոլել սահմանադրական բարեփոխումների արդյունքում սահմանված առանձին իրավակարգավորումներ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ